

ՔԱՐԱՔԷ ՀԱՅԱՍՏԱՆԷ

ՀԱՆՐԱՊԵՏ ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲՆԱԿԱՆ, ԲԱՆՍՈՒՐԱԿԱՆ, ԵՒ ԱՌՆԻՏՐԱԿԱՆ

ՀՐԶԱՆ ՎԵՑԱՄՍ ԵՍԱՅ

Ա. ՏԱՐԻ. Ա. ՀՐԶԱՆ

1862

ԹԻԻՑ. ՄԱՅԻՍ 20

Հրատարակի ամիսը երկու անգամ .
Վեցամսեայ գինն է 8 ֆրանգ .
Իջմիրեն գուրս ճամբու ծախքը միա-
տեղ 9 ֆրանգ .
Ստորագրութիւնները չըջանին սկիզբին
կցուցին .
Հանդեսիս ուցցուած անցնալու նամակ
կամ ծրար չընդունուիր .

Ստորագրութեան տեղերն են ,
Իջմիր՝ Ծաղկի գրատէնեակը , Կի-
րիթ խան , Թիւ 3 :
Կ. Պոլիս , մեծարդոյ խ. Թ. Գա-
ջենակերտանին սենեակը Պաշքը դաշար
կամուրջին գլուխը . Էւ Ընթերցասիրաց
ընկերութեան ընթերցարանը , Մեծ նոր
խան , Թիւ 6 :

Հալեդ , մեծարդոյ Յ. Ս. Գիւրքան-
նօֆ .
Փարիզ , M. A. Mourad, Rue du Dra-
gon, 26.
Մանչեսթեր , D. Ekisler, George
Street, 78.

ԱՂԱՏԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ի. ՕՄԻՒՌՆԻԱ

Մարդասիրութիւնը՝ աշխարհիս վրայի ամենա-
մեծ առաքինութիւններէն մին է . առանց անոր ո՛չ
առաքինութիւն , ո՛չ ճշմարիտ քաջութիւն և ո՛չ
ալ հաստատուն փառք կունենայ մարդ մի : Իւր ըն-
կերը սիրելու , անոր օգնութեան հասնելու գեղե-
ցիկ ձրից տէր ըլլալու համար՝ մարդս զգայուն
սիրտ և մարդասէր հոգի պարտ է ունենալ : Մար-
դասէր անձը հոգւով չափ կ'աշխատի 'ի բարօրու-
թիւն իւր եղբարցը և յերջանկութիւն թշուառնե-
րու , որ անպակաս են աշխարհիս երեսը : Այսպիսի
մարդը այս աշխարհիս վրայ միշտ զովելի է և
հանդերձեալին մէջ ալ իրեն համար պարտա-
տուած ցանկալի տեղը պիտի նստի և այս տեղ
սերմանած բարերարութեան և մարդասիրութեան
սերմը այնտեղ պիտի քաղէ :

Մարդս քանի սր մարդ է պարտաւոր է իւր

ընկերներուն , ըստ կարի իւրում , օգնութեան հաս-
նելու աշխատիլ : Աւրիշներու վրայ դուրս չունենա-
լը , մարդասիրութիւն չունենալը՝ ո՛չ թէ միայն
քաղաքավարութեան և քաղաքակրթութեան դէմ
դուրս ել և բարբարոսութեան մէջ իյնալ է , հա-
պա աւազակներու և վայրենիներու յարմար խիստ
անբնական կուրուքիւն մի է , այսինքն մարդու-
թիւն չէ՛ հապա մարդակերութիւն կ'ըսէ Ֆենելոն :

Գովելի և փառաց արժանի է այն մարդը՝ որ
իւր ընկերին ամեն տեսակ պիտոյքը կը հոգայ և
հոգեւոր և մարմնաւոր մխիթարութեամբ կը լնու :

Ա՛րջափ անարժան է ճաշք՝ անունը կրելու նա՝
որ իւր աւելորդէն անդամ մաս չհասնէր թշուառ-
ներու համար , թող այս՝ ուրիշներու հարկաւոր ե-
ղած բաները անդթաբար կը մերժէ :

Քանի որ կ'ապրի մարդս իւր ներսէն անպակաս
ընել պէտք է զթութիւնը և մարդասիրութիւնը :

Ահա սոյն այս զովելի և բարեպաշտ նպատա-
կաւ՝ Օմիւրնիոյ մէջ Աշխատիւրայ անունով ընկե-

բութիւն մի հաստատուեցաւ հոգատարութեամբ հետեւեալ ուսումնական և ազգասէր երիտասարդներուն . այսինքն են Պարոնայք ,

Ստեփան Չէլիկ

Գրիգոր Մ . Յ . Եսայեան

Գալուստ Վէմեան

Սարգիս Թ . Չէլիկեանց

Պօղոս Պերկամալեան Գանձապէս

Սարգիս Մ . Վանանդեցի Ափեմադար

Յարութիւն Փափաղեան Գանձապէս

Յակոբ Սարկոսեան

Սահակ Աւետիքեան

Պօղոս Կ . Տիլլէրեան

Մեծի դովեստից արժանի է արդարեւ իրենց ընտրած այս զեղեցիկ և հոգեզուարճ նպատակը :

Մի միայն մեր կողմանէ իրենց այս պատուական և ազնիւ ձեռնարկութեան մշտնջենաւոր յաջատուութիւն կը բարեմաղթենք՝ ի խնդրութիւն և ի մխիթարութիւն թշուառ տնանկներու :

Կը լսենք որ Աղբատասիրաց Բնկերութիւնը իւր փութաջանութեամբը 20 ի չափ տնանկ և անկար հիւանդներու ամեն տեսակ պէտքերը կը հոգայ և զանոնք կը խնամէ :

Կը յորդորենք խոնարհաբար Յարգի Հասարակութիւնը որ ձեռքէն եկածին չափ իւր դրամական սրտաբուլի նպաստները անպակաս ընէ սոյն ընկերութեան տալու :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Հետադայ նամակը խրկուած է մեզ ի հրատարակութիւն .

Իզմիր . 10 Մայիս . 1862

Չուարթագեղդ իմ Գարուն .

Ձեր պատուական հանդէսին երրորդ թուոյն մէջ “ Դաստիարակի կամ Ֆանիկարթի ընտրութիւն ” խորագիրով յօդուած մը կարդացի , որն որ խիստ իրաւացի երեւալուն համար ինծի , հրապարակաւ իմ շնորհակալութիւնս կը յայտնեմ ազգասէր խմբագրիդ , և այս առիթով կուզեմ քանի մը խօսք ալ իմ կողմանէս ըսել , զորս եթէ արժանի կը դառնայ , բարեհաճեցէք ձեր օրագրոյն մէջ տեղի մը շնորհելու :

Քանի որ ազգի մը հորիզոնին վրայ դեռ

ծածկած է ազիտութեան թանձրամած ամպը , անհնարին է որ այն ազգը աչօք բացօք և ներքին համոզմամբ ընդունի կամ մերժէ որ և իցէ կարծիք կամ գրութիւն . և քանի որ մէկը կոյր զկուրայն կ'երթայ՝ ի հարկէ շատ անգամ պիտի մնլորի և կարելի է թէ ֆեստուի ալ երբեմն : Ահա մեր Ազգընալ ցաւօք սրտի տակաւին կը տեսնանք՝ որ շատ բաներու մէջ խարխալելով կը քալէ , կամ լաւ ևս է ըսել առանց զէջ աղէկէն ընտրելու՝ միամտորար ուրիշ ազգաց կը հետեւի :

Այո , հետեւինք եղբարք իմ , չեմ ըսեր թէ չը հետեւինք , բայց օգտակարներուն , և մեր Ազգին հանգամանացը և բնաւորութեանը խիստ յարմար երեցածներուն միայն :

Գանք հիմայ ըստ կարի քննելու մեր ազգին հետեւութիւնը կրթութեան և դաստիարակութեան մասին , որ մարդուս ամէնէն նուիրական և էական պարտաւորութիւնն է , և անոր երկրիս վրայ Արարչին ամէնէն զերազոյն արարածն ըլլալը կրթութեամբ և եթէ կը ճանչցուի . վերջապէս մեր այժմեան կրթութեան կախում ունի մեր ազգաց երջանկութիւնը կամ թշուառութիւնը :

Ինչպէս յայտնի է ամէնուն՝ թէ ներկայիս մէջ հաճկաստանի քանի մը ծաղկեալ քաղաքներու մէջ մեծ սէր կայ կրթութեան , ուսումնական և անուս առհասարակ կրթութիւն , կրթութիւն կ'աղաղակեն , բայց եթէ չեմ սխալի՝ շատ մեծ տարբերութիւն կայ այս երկու մասին կարծեացը մէջ կրթութեան վրայ : Անուր որչափ որ կուզէ իր զաւակը կրթուի , բայց դժբաղդաբար չը դիտեր ինչ եղանակաւ պէտք է կրթել զայն , անոր համար շատերը ազգային լեզուին և ազգային նախալըրթական դաստիարակութեան ամենափոքրիկ ճաշակ մը դեռ չը տեսնեն , մէկէն օտար դպրոցներու և օտար վարժապետներու կը յանձնեն իրենց մատղաղ զաւակունքը : Յաւալի վիճակ Եւ ասիկա ուրիշ բանի չը նմանիր , այլ միայն այն դժբաղդ երախային , որ դեռ իր խանդակաթիւնը և գորովագութ մօրը կաթը չը ծծած դահեակներու ձեռք կանցնի : Ձեմ ուղեր մի առ մի թուել աս տեղաւ տեսակ կրթութեանն յառաջ եկած ֆեաները , թէ ընդհանուր ազգին նկատմամբ , և թէ նոյն զաւակացը իրենց ընտանեացը նկատմամբ : Միայն կուզեմ հոս տեղ փոքրիկ դիտողութիւն մը ընել : Արդի երիտասարդներուն մէջ անոնք որ ազգային վարժարաններու մէջ և հայրենասէր դաստիարակներու հսկողութեան տակ իրենց կրթութիւնը առած են , զիտէք արդեօք ինչ հայրենասէր ոգի , ինչ ուղիղ սկզբունք և ինչ ազնիւ գաղափարներ

ունին, և ներկայիս մէջ ազգին որչափ օգտակար անդամները եղած են, իսկ ընդ հակառակն անոնք որ օտար չօգնէին մէջ կրթութեան են զիտէք արդեօք ինչ տեսակ դադարեցնելով տղութեան և իրենց միտքը: Եւ այս մտար գրութիւնը մեծ կորուստ է մեր ազգին եթէ այսուհետեւ ալ շատ անգամ ըլլայ:

Խօսինք քիչ մը ալ ուսումնականին՝ կրթութեան վրայ ունեցած կարծիքը, ուսումնականը նախ կուզէ որ իր ազգին սիրուն մանկիքը ճանչնան թէ անցեալին մէջ որո՞նք էին իրենց նախահարգը բարոյականութեան երանաշնորհ ուսուցիչները, ինչպէս են՝ Կերեսները և Մեսրոպները, երկրորդ կուզէ ուսումնականը, որ պատմութեան մէջ սորվի տղան, Հայկայ անփառասէր ողին, Արամայ ջերմաջերմ հայրենասիրութիւնը Արայի՝ վատութեան չը խոնարհելու համար իր գովելի սկզբունքը մինչև ի մահ անյողդողդ պահելը, և վերջապէս Անուշահունի քաղցրաբարոյութիւնը և այլն և այլն: Երրորդ հարկ է որ սորվի տղան աշխարհագրութեան մէջ ամէնէն առաջ թէ մեր ցանկալի Հայաստանը՝ աշխարհիս ո՞ր կողմը կը դառնուի, և Հայաստանի ո՞ր կողմն է մեծաշէն Մինն, հսկայածին Շամիրա մակերաւ, մեծահամբաւ Տիգրանակերաւ, և այլն: Եւ ասոնցմէ ետքը թող պատանին բարձրացունէ այս հիման վրայ դիտութեան շէնքը իր միտքին մէջ որչափ որ կուզէ ճանչնալով ուրիշ ազգաց դիւցազունները և սորվելով անոնց այլ և այլ գովելի և հիանալի գործքերը:

Այլ գովեմ այն ուսումնական ծնողները, որոնք իրենց զաւակները մինչև որ այլ և այլ միջոցներով ազգային դաստիարակութիւն չը տան, ուրիշ դիտութիւններ սորվելու համար Եւրոպա կամ թէ Եւրոպական դպրոցներ չեն խրկեր զանոնք:

Չը կարծենք որ հաճկատանի մէջ Եւրոպացոց ձեռքով կառավարուած թէ՛ տղայոց և թէ՛ աղջկանց դպրոցները ամենայն բարեկարգութեամբ կը յառաջանան: Օմիւսնիոյ նկատմամբ խօսելով ինչ որ Գննէ անոնք, մի և նոյն են մեր ազգային վարժարաններն ալ: Բայց ամսօս որ օտարին որ և իցէ պզտիկ գործը, մեր աչքին շատ մեծ բան կ'երևայ: Չը խաբուինք, սիրելի ազգայինք, չը խաբուինք, հերիք է որչափ որ խաբուեցանք մինչև հիմայ:

Արդ խօսքս իմ աղնիւ հայրենակցացոց դարձնելով՝ կը խնդրեմ ամէն մէկ ազգասէր ծնողքներէ, որ հեռացնեն իրենց մատողջ զաւակները օտարին ցուրտ հսկողութենէն Վերջէն քոխոսալը ստակ չընէք:

Այս առիթով կուզեմ յիշեցնել որ Օմիւսնիա այս օրուան օրս տարին 200,000 էն աւելի ստակ կուտայ արտաքին օտար դպրոցներու: Եթէ սոյն ստակը մեր ազգային վարժարաններուն ծախք ընելով անոնց աւելի բարեկարգ ընթացք մը տալու և զանոնք աւելի պայծառացնելու պարտաւորութիւն չունին Այս չափով մնամ առայժմ

Չեր և այլն

* *

Յարգի Կամակարին վերջին դիտողութեան վրայ, մեր կողմանէ կը փութանք ըսելու որ արդարեւ Օմիւսնացիք տարին 200,000 չափ ստակ Եւրոպական դպրոցներու ծախք կ'ընեն, որպէս զի իրենց թէ՛ մանչ և թէ՛ աղջիկ զաւակները կրթութիւն և բան սորվին: Բայց դժբաղդաբար շատերը նոյն դպրոցներէն կամ ամենեւին բան չի սովորած և կամ անկիրթ և ամբարտաւան կ'ըլլեն, և ի պատիժ իրենց ծնողաց՝ իրենց ծնողքը կ'անարդէն և զազղը չեն հաւնիր. Ծնողք, հօգ տարէք ձեր զաւակաց, ազգային կրթութիւն տուէք անոնց, ազգային դպրոցներ խրկելով ձեր սիրելի զաւակները: Իսկ եթէ ազգային դպրոցները բարեկարգ վիճակի մէջ չեն, աշխատեցէք անոնց բարեկարգութեանը: Օտարներու քսակը լեցուած ստակով՝ շատ բաներ կարելի է ընել

ՀԱՄԱՐՈՑ ԲԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

(Տէ՛ Ի՛- 7 . Երէ՛ 50) :

Գ .

Տալոյց հետ շարուեցաւ կերպ . —

11. Տղու մի սաստիկ կրքի ելած առնել՝ զայն խրատել, յանգիմանէն ու ամօքնել, մարգավարութեան դէմ ըլլալէն դատ՝ անօգուտ ալ է: Պէտք է սպասել՝ մինչև որ անոր՝ այն առաջին բորբոքը անցնի և խելքը գլուխը գայ:

12. Այնպէս ըրէ՛ որ տղան՝ իւր ըրածին գէշ պատուը ինքը տեսնելով՝ ինքնիրեն ամչնայ և ըզդաստանայ:

13. Կ'ըսեն թէ՛ հայր մի կամ մայր մի իրենց ամեն զաւակաց մի աչքով նայելու են, որովհետեւ ամէնքն ալ հաւատար իրենց զաւակներն են: — Այս դիտողութիւնը ծուռ է և սխալ. հայր և մայր մի իրենց տղայոց մին միւսէն աւելի պէտք են սիրել, այժմ. բայց ինչպէս, չէթէ անոր համար որ մին յառաջ ծնած է և միւսը վերջը, կամ մէ-

կուն՝ ասքերը շիտակ են և մէկալը քիչ մի ծուռ կը կոխէ, կամ թէ մին դեղեցիկ դէմք ունի և միւսը ազեղ. հասցա՝ մին միւսէն աւելի ուսումնասէր, առաքինի, բանին դործին մտադիր, աշխատասէր և հնազանդ լինելուն համար:

14. Պէտք չէ՝ իբր գերի դործածել տըշայքը:

15. Նայէ՛ որ տըշայքը քու վրադ ունեցած յարդերնին չկորուսընեն:

16. Բարի հայր մի՛ միշտ յարմար ժամանակի մէջ՝ իւր տղոցը մարդութեան վայելուչ և բարի խրատներ կուտայ և կը սովորեցնէ:

17. Ըմեն բանէ յառաջ, եթէ Հայ ես, ուղիղ և մաքուր Հայերէն խօսելու վարժեց՛ուր տըշադ, փոխանակ օտար ու խորթ լեզուներ սովորեցընելով՝ ազգատեցութեան անուն վաստակելու:

18. Ծնողք կան՝ որոնք կուզեն որ իրենց տղայքը դեռ օրօրոյն մէջ եղած ատեն՝ տեսակ տեսակ դիտութիւններով զարգարուած ըլլան, որպէս զի տեսնողները վրանին զարմանան. — կարծես թէ ամեն բան կամայ կամայ աստիճանաւ, ըստ բնութեան օրինաց, ըլլալը չեն գիտեր:

19. Թէ՛ խօսքով և թէ՛ դործքով դէշ օրինակ մի ըլլար տղայոց:

20. Անիրաւարար տղան մի պատժեր:

21. Տղայ մի իւր հօրը և մօրը մէջ տեղի ունեցած վիճաբանութեան և կռուոյն երբէք պէտք չէ՛ տկանատես ըլլալ:

22. Տղայոց սրտին մէջ նախանձու սերմեր ցանէ՛ զդուշալի:

23. Տղայոց հետ բարեսրտութեամբ, մարտիրութեամբ և քաղցրութեամբ վարուէ՛. բայց նայէ՛ որ քու բարեսրտութիւնդ՝ տկարութեան չ'իջնայ:

24. Ծնողք՝ իրենց տղայոց դէպ 'ի իրենց ունեցած պարտաւորութիւնները կատարել տալու խիստ ըլլալ պէտք են, առանց վախցնելու. քանզի վախին բնական հետեանքն է՝ ատելութիւն, բայց տղայք պէտք են միշտ իրենց ծնողքը սիրել:

25. Միտով եղած բանը միշտ աղէկ կ'ըլլայ, իսկ վախով եղածը միշտ գէշ:

Հետեւեալ յօդուածը՝ որ Սենեկայ երեւելի փիլիսոփային համառօտ կենադրութիւնը և իւր Բարոյական խորհրդածութիւններէն Հաւաքածոյ մի կը պարունակէ, Յունական լեզուէ թարգմանելով՝ խրկած է մեզ Խօսէմիշու Ազգային վարժարանին դասաւանդներէն Յարգի Պարոն Վ. Մաղաքիա

Յարութիւնեանը, անոր հրատարակութիւնը խընդրելով:

Ս Ե Ն Ե Կ Ը

Սենեկա ծնաւ տասն և երեք կամ ըստ այլոց ութ տարի Քրիստոսէ ետքը, Սպանիայի Քորտիվա քաղաքը: Նախ՝ քաջ ատենաբան կարգեցաւ Հռոմայի մէջ, յետոյ թող տալով դատաստանարանները, փիլիսոփայութեան տուաւ զինքը: Աղոյիոս կայսեր որդեկիր, և հռչակաւոր Ներոնին վարժապետն ըլլալով, ամեն ջանք 'ի դործ դրաւ զանի առաքինի թաղաւոր մը բնել. և յիրաւի որչափ որ Ներոն իր վարժապետին խրատներուն հետեւեցաւ, ամենուն սիրելի էր: Բայց կեղծաւոր էր անիկայ, և առաքինութեան պարտքերը երեսանց կը սրահէր. և ոչ թէ մտացն առաջագործեամբ և ուղիղ բանին հնազանդութեամբ. որով շողքորթութիւնը դիւրաւ մուտք, և իր ուղածէն աւելի յաջողութիւն դատւ իր հողոյն մէջ: Վասն զի այս զգուշի խորամանկ զաղանը (շողքորթութիւնը), իշխանաւորաց հօգին ու սիրտը ապականել կը ցանկոյ միշտ այն դիտաւորութեամբ որ անպատիժ կատարել տայ անոր զազանային ու տամարդի հաճութիւնները, ինչպէս ըստ մեծի մասին շողքորթութեան տարափոխիկ ակտը այնպէս աւերմունք կը պատճառէ անով շաղխեալ եղողներուն, մինչև բոլորովին անբանութեան ու յիմարութեան կը տանի թէ՛ ի կորուստ իւր անձին և թէ՛ շողքորթողաց: Եւս Ներոնը, որ երբեմն չարագործի մը վրայ եղած դատաստանի մահաբեր վճիռը ստորագրելու համար կըսէր, “Նրանի թէ զիր գրել չգիտնայի”, նոյն ինքը յետոյ կըսէր “Ար փափաքէի որ բոլոր մարդկային սեռը միայն մէկ գլուխ ունենար, որ պէս զի հաճութեամբ սրտի մէկ հարուածով զլնատէի զան”: Ներոն չհանդուրժելով իր վարժապետին առաքինութիւնը իր անձնական չարութեանցը յանդիմանիչ ունենալ, Սենեկայի ծառաներէն Աղէօնիտէս անուն մէկուն հրամայեց որ իր տէրը թունաւորէ, բայց որովհետեւ յոյսը պարսպ ելաւ կամ ծառային հաւատարմութենէն և կամ Սենեկայի հսկողութենէն, Ներոն ամբաստանեց իր անմեղ վարժապետը, իբր համախոհ Պիսոնի ձեռօք իւր անձին դէմ եղած դաւաճութեան, և այս պատճառաւ 'ի մահ դատապարտեց, միայն իր կամայը թող լով որ իր ուղած մահը ընտրէ: Սենեկա իր երակներուն բացուիլը ընտրեց և այսպէս վախճանեցաւ 55 տարուան:

Այս փիլիսոփայն շատ և սքանչելի ճառեր գրեց սրոնք հիմա չեն գտնուիր: Ըստ բարոյական

փրկստփայլութեան կենդանի մնացորդներէն զլեւ-
ւորներն են, Բարկութեան վրայ, Գիւղարանու-
թեան, Կախախնամութեան, Հոգւոյ Անդորրու-
թեան, Խմաստնոյն վշտաց մէջ անդրդուելի մնա-
լուն, Համեստութեան, Սակաւպետութեան, Եր-
ջանիկ կենաց, Բարեգործութեան վրայ և այլն :
Եւ թէ որ 'ի բաց հանէք քանի մը Ստոյիկեան
չափազանցութիւնները, ասոր բոլոր բարոյական
գրուածները սքանչելի են ու շատ օգտակար, ինչ-
պէս հեռեւեալ խորհրդածութիւններէն կրնայ ամեն
մարդ համոզուիլ ասոր արժանաւորութեանը :

Կը սիրենք մեր ծնողքը, և յիրաւի պէտք է
որ սիրենք զանոնք թէ և մարդիկ ըստ մեծի մասին
որդեծնութեան դիտաւորութեամբ չեն խնդրեր ա-
մուսնութիւնը. և որչափ առաւել պարտաւոր ենք
զՄատուած սիրել : Զկրնար մէկը ըսել թէ Մա-
ւած առանց դիտաւորութեան ստեղծեց զմարդը,
զի յամենայնի նախապատրաստեց հարկաւոր եղած
սնունդները և օդնութիւնները. աշխարհքիս սկիզ-
բէն նախախնամեց զմեզ, և այնպէս կարողաբեց
տիեզերքը, որ իր հսկողութիւնները ու բարերա-
րութիւնները միշտ վայելէ ընդ ընդ չենք կարող
տարակուսիլ : Թուէ՛ք, ո՞վ մարդ, որչափ բարերա-
րութիւններ որ շնորհեց քեզ Մատուած : Այս դո-
րովադուծ Հայրը սորվեցուց քեզի քու իշխանու-
թեանդ տակ նուաճելու քեզմէ խիստ զօրաւոր ե-
ղող այսչափ կենդանիները, անորմէ առիթ մատու-
րական կարողութիւնները, անոր կը պարտաւորիս
արհեստներդ. և ունեցած հարստութիւններդ, և
քու պիտոյիցդ կարեւոր այնքան բնական ձիրքերը,
և ամեն տեսակ բարեաց առատութիւնը : Ուշի ու-
շով նկատէ ինչ ըրաւ զքեզ Մատուած, ու պիտի
խոստովանիս թէ իւր բարերարութեան տմենէն
պատուաւոր արարածն ես : Արդարեւ յիրուի սիրեց
զքեզ ու կը սիրէ անչափ սիրով, աշխարհքիս մէջ
ամենէն պատուական կարգը տուաւ քեզ, անմիջա-
պէս իր երկրորդը դասելով զքեզ :

Թող երախտադէտ ըլլանք այսքան բարի Տի-
րոջը, ու մեր աղքատութիւնը ու տկարութիւնը
պտտաւոր չբերենք : Եւ ոչ մէկ բան կարող է մեզի
մոռցնել տալ մեր երախտադիտութիւնը զոր տիե-
զերաց գերազոյն Տիրոջը կը պարտաւորինք :

Բոլոր աշխարհք Մատուածութեան տաճարն է,
տաճար փառաւոր, և միայն Մատուածային մեծու-
թեան արժանի : Ո՞վ աւաղելի խաբէութիւն, հա-
ւատայ արդեօք մէկը, թէ ասանկ զեղեցիկ, ասանկ
ներգաշնակաւոր, ասանկ յաւիտեանական արարչա-
գործութիւնը կրնայ երբեք բաղդին գործը ըլլալ :

Թող լսենք իմաստուններուն, որոնք կը ցու-

ցընեն մեզ, թէ մարդս երկինք կելլէ, սակաւա-
պետութեամբ, համեստութեամբ, հաստատ և ան-
դրդուելի աւաքինութեամբ : Մատուած չնախան-
ձիր մարդուս երջանկութեանը, իր երկնային բնա-
կութեան դոները բաց են, ինքը իր Մատուածային
ձեռքը կ'երկնցնէ հոն ելլելու բուռն ընդունեալն :
Մի զարմանար թէ մարդ կարող է առ Մատուած
ելլել : Մի թէ Մատուած մեզի չեկաւ, և որ մեծն է
մեր մէջը չբնակեցաւ : Այո՛, արդարին հոգւոյն
մէջ կը բնակի, Մատուածային սերմ կը գտնուի
մեր մարմիններուն մէջ, առաքինի սիրտը կը տաք-
ցընէ զայն և այսպէս կընձիղէ ու պտուղներ կու-
տայ ազնուադոյն պտտաւորութեամբ արժանաւոր գործոց
որով կը կենդանանայ : ԶՄատուած պատուել, է
զինքը ճանչնալ, ստոյգ ըլլանք թէ կայ Մատուած.
պաշտօն մատուցանենք անոր գերազոյն մեծութեանը
և գոհութիւն անոր բարերարութեանցը : Կողմէս
պատուել զՄատուած, բարի մարդ եղիւ, երբ զա-
նիկայ կը յիշես ան ատեն կը պաշտես զինքը : Թող
խնդրենք Մատուածի սրտի ուղղութիւն, հոգւոյ
արդարութիւն և մարմնոյ առողջութիւն : Ո՞վ ան-
միտութեան մարդկան, խոնարհ ձայնիւ Մատուած
անարժան ու անարդ բաներ կը խնդրեն, թէ որ
մէկը մօտենայ անոնց մահիկ ընելու, ամենալավ կը
լսեն, ետքը կը համարձակին հաւատալ Մատուոյ
անարդ զազանիք մը որ պիտի ամենայն մարդոց
յայտնելու : Ուրեմն քու վարքիդ կանոն ունեցիր
այս զեղեցիկ պատուիրանը : “Մարդոց հետ ա-
նանկ ապրիս, որպէս թէ ներկայ ըլլար Մատուած
ու քեզ տեսներ. Մատուոյ հետ անանկ խօսիս,
որպէս թէ ամեն մարդիկ ներկայ եղած ըլլային ու
քեզ լսէին” :

Անհրաժեշտ հարկաւորութիւն չէ Մատուոյ
փառացը համար մեծախառնոյ տաճարներ կանգնել,
այն է ամենահարկաւոր որ մենք մեր սիրտերը նուր-
բենք անոր բնակութեանը համար : Ուղիղ և մա-
քուր կամք, ահա այս է ամենէն հաճելի պատարագ-
անոր Մատուածութեանը :

Միայնաւոր յաջորդ լինի :

ԲՆՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐԿՈՍ ԶՈՐԱ ՏԱՐԻՔԸ .

ՏԵՍԱՐԱՆՔ ԵՆՆԱՅ

Գ. — Հատուն Հատակ. — Դարձ :

(ՏԵ՛ ԲԻ՛ 5. Ե՛Դ՛36.)

Տիգրան՝ Գարնան շոգեւել խորհրդածութիւն

ներէն և եռանդուն երիտասարդութենէն, Ամառուան արդեանց և Հասուն Հասակին հայրատուն և խիստ դատողութեանց կը ժամանէ:

Փառասիրութեան, հարստութեան բաղձանքները, աշխարհային ունայնասիրութիւնները հետզհետէ իւր զբաղումները կը լլան: Իւր պակասութիւններն ու սխալումները իրեն խոհեմութիւն սովորեցուցած են, իւր պատիւը տեսութիւնները՝ տաքակուսանաց և յետոյ անտարբերութեան կառաջնորդէն զինքը: Դիւրահաւան էր և դիւրագրգիռ, հաստատամիտ և կասկածոտ կը լլայ: Աեանքը իրեն համար ընդարձակ կրկէս մի է, և ինքը ըմբիշի մը նման անոր ամեն կողմը ճանչել կուզէ: Իւր սիրոյ և վեհանձնութեան հպաքտ զղացմանց աւերակներուն վրայ կը կանգնէ ճարտարութեան, հանդարտութեան և դիմադրութեան հպարտութիւնը: Արհաւիրէ և կը սխալի, նորէն կը սխալի և դարձեալ կը սխալի, դիմադրու բայց համեստօրէն ուրիշ ճամբայի մը մէջ կը նետուի և կը յաջողի:

Տիգրան հարուստ է բայց տրտում: Վաստակած ստակը իւր ներքսակողմը տանտաղըստիան ծառա մի կը յարուցանէ, որ բնաւ հանդիստ չտար իրեն: Խոռովալի աչքով մի իւր հետամուտներուն (concurrents) շարժումները կը գիտէ, դողդոջուն ձեռքով մի անդադար իւր հաշիւները կը շինէ, կը կարգադրէ, կաւրէ և նորէն կը շինէ:

Այդպէս օր մի, յորում բաղդէն խնդրած ստապատիր զուարճութիւններէն և հաճութիւններէն ձանձրացած՝ և վախճալով որ չըլլայ թէ նոյններուն մէջ սրտի դառն տհաճութիւն մի պատահի իրեն, կը կասի իւր աշխատութենէն: Այն ժամանակ, մոխիրի տակ ծածկուած բոցի մը պէս՝ զօրաւոր շունչէ մի կարծարծի, և անարատ սիրոյ և խանդավառանաց ու մաքուր և վեհանձն մտածումներուն ճառագայթ մի՝ իւր հրաբխական կազմութեան փրփուրներուն տակ՝ իւր ներսի գին նորէն կը ցլուանայ: Այն ժամանակ իւր պատանութեան զգաստ և խոհեմ յիշատակութեանց մէջ, ինչպէս զովարար ջրոյ մէջ, նորէն կը նետուի, և հայրենի տան պաշտպանական ստուերին, հանգստութեան և քաղցր ու բարերար սփոփանաց կը փափաքի: Իւր ծննդեան գաւառը՝ այն տունը կը գտնայ, ուր տեղ իւր զուարթ մանկութիւնը իբրեւ ծաղիկ բացուեր էր: Իւր քոյրը այն տեղ կը գտնէ, իւր հաւատարիմ քոյրը Տիգրանուհին, որ մինչև այն ատեն իւր հայրենի աստիճան չբաժնուեր և իւր Պարոյր բարեկամին հետ կարգուեր էր: Պարոյր կը փութայ յայտնելու անոր՝ իրեն քոյրը երջանիկ ըլլալը և կուզէ զան իրենց երջանկութեան մաս

նակից ընել:

Տիգրան իւր քոյրը տանը մէջ, կը տեսնէ իւր տղայութեան խաղերուն ընկերուհին, սիրուն Սաքրուհին, որուն գեղեցկութիւնը աւելցեր էր տարիներ անցնելով: Օտայն տեսածին պէս՝ այնպիսի ներքին յուզման մի ենթակայ կը լլայ, զոր երբեք զգացած չէր այն կիներուն քով որոնց հետ պարահանդէսներու (պալ) մէջ խաղացած և սըրահներու մէջ շրջադայած էր: Սաքրուհին՝ բընական շնորհք մի ունէր՝ որուն վրայ աշխարհային հնարքները և ոչ մի արուեստական դարգ կրնան աւելցնել, սրտի համեստութիւն մի՝ որ բոլոր իւր գործերուն և խօսքերուն մէջ կը տեսնուէր, խղճի մաքրութիւն և հանդարտութիւն մի՝ որ իրեն շարժումները քաղցր և ծանր կը ընէր, ժպտելուն մէջ՝ անխմանելի անուշութիւն մի, և իւր աչաց մէջ՝ երկնային ճառագայթ մի:

Տիգրան կեռեակայէ որ անցեալին զօրութեամբ կարող է անոր հետ առջի ունեցած ընտանի վարմունքը նորէն ձեռք առնուլ: Բայց նա այնպիսի մեծանձնութեամբ մի կը խօսի անոր հետ, որ կը հարկադրի յարգանք և զգուշութեամբ վարուիլ: Սաքրուհին ոչ կը փնտռէ զայն և ոչ ալ կը փախչի անորմէ, ոչ անորմէ յարգութիւն կը սպասէ և ոչ ալ անոր յարգութիւնները առ ոչինչ կը գրէ, մեծաւ հանդարտութեամբ՝ կը պտտախառնէ անոր: Բայց Տիգրանին այնպէս կեռեկէր որ իւր անորմէ դարձած և քոյրը հետ խօսեցած ժամանակը, անիկայ համակրական հետաքրքրութեամբ մի իրեն խօսակցութեան միտ կը գնէր:

Տիգրան քանի զայն տեսնէր, այնքան նոր յանկուցիչ զօրութիւն մի զինքը դէպ ի տնոր կը տանէր, և անոր կուսական անմեղ շնորհքէն յափշտակեալ ու անոր առաքինութենէն յաղթահարեալ՝ դերի կը լլար անոր: Երբեմնակի աշխարհային սրտի տեսութիւնները իւր մտածումները նորէն կը բռնէին և իւր երեակայութիւնը ուրիշ տեղ կը տանէին: Զետոյ դարձեալ տեսնելուն այս օրիորդը՝ որ այնչափ համեստ էր՝ առանց հպարտանալու ունեց պէս՝ յերկնից ընդունած բաղմաթիւ ձիրքերուն համար, այնչափ անբիծ՝ իւր կենդանի գեղեցկութեամբը, այնչափ հաւատարիմ և մտադիր իւր ամենօրեայ պարտաւորութեանց, և խիստ զոհ իւր անշուք ճակատագրին, զայն տեսնելուն խոնարհ և խաղաղական կեանք մի կը յիշէր, յարեւնը ման անոր՝ որուն օրինակը տուած էին իրեն ծընողքը:

Բոլոր ամառը՝ տարակոյտ և յոյս, փառասէր յուզումներ և խոհեմ դաղաբարներ՝ շարունակ իբր

բու կը յաջորդէին : Միտքը կու գար այն քաղաքները՝ ուրանել հարստութիւն ձեռք բերած էր , այն քաղաքները՝ ուր տեղ Մաքրութիւն աւելի ղեղափայլ և սրտառական կիներու հանգիստ էր՝ որոնք միշտ սրտառաստ էին իւր մեծարանքներն ընդունելու , բայց անոնց՝ իւր վրայ ունեցած ազդեցութիւնը ջնջուելով՝ անոր փախստական հետքը մնացած էր և Մաքրութիւն ազդեցութիւնը անպաշար կընդլայնէր և աւելի կը հաստատուէր : Տիգրան իւր դասընկերին քորջը վրայօք կը խօսի Տիգրանութիւն , այն փառաւոր և հիանալի օրիորդին վրայօք որն որ զինքը հմայած էր մարդկային ընկերութեանց մէջ մտած ժամանակը :

Տիգրանութիւն , ծանրութեամբ մի անոր խօսքերուն միտ դնելէ ետք , զլուխը կը շարժէ և կը պատասխանէ .

— Մերեւի Տիգրան , քու ճակատագիրդ այդ օրիորդին հետ կնքուած և զայն քեզի ընկերութիւն առած չէի ուզեր տեսնել , հապա ուրիշ :

Աշխարհ մէջ զիշեր մի , Տիգրան՝ Մաքրութիւն և անոր պառաւ մօրը նստած փոքրիկ տունը կը մտնէ : Այնտեղ զեղևութեան և աւելորդ զարդարանքի երեւոյթ մի անդամ չկար . . . հապա երկու բարեպաշտութիւն հոգիներ այնտեղ երանելի հանդարտութեան մէջ կապրէին , Աստուծոյ տեսութեան հովանիին տակ :

— Մաքրութիւն , կըսէ Տիգրան , երբեմն ձեզի տուած բարեկամութեան յիշատակը պահած էք դեռ : — Այո՛ , կը պատասխանէ օրիորդը . հանգարտութեամբ , կարծեմ պահած եմ տակաւին : — Ա՛յ , անիկա ձեզի նուիրած ժամանակս՝ երջանիկ ժամանակ մի է եղեր : — Այո՛ : — Կը բաղձամ այն ժամանակուան մէջ ըլլալ նորէն : — Ճշմարիտ կըսէք : — Աշխարհային աղմկախառն հաճութիւններն ու զուարճութիւնները զայն մոռցնել տալ չեն կրնար : — Այնպէս կը կարծէք :

Տիգրան կը մտածէ որ այս պարագային մէջ՝ իւր սովորական ճարտարախօս ձևերը բանեցնէ , բայց յանկարծ յետ կասի նոյն աշխատութիւնէն : Մինչև ցայժմ շատ սրբազաններու մէջ աշխարհային հասարակ լեզուն զործածելուն համար , չէր ուզեր հիմայ դարձեալ նոյնը զործածել , որովհետև աւագուտ ալ էր :

Այսու ամենայնիւ քիչ մի լուծիւն պահելէ ետք՝ նորէն խօսակցիլ կը փորձէր :

— Մաքրութիւն , երջանիկ էք այս տեղ : — Աղէկ բարեկամներ ունիմ : — Տիգրանութիւն քոյրս զձեզ շատ կը սիրէ : — Այո՛ , ապահով եմ ատոր վրայ : — Ժամանակը ուշ է , պէտք է որ ձեզմէ

բաժնուիմ . Գիշեր բարի , Մաքրութիւն : — Գիշեր բարի , Տիգրան , կըսէ օրիորդը , և սրտկառելի վեհանձնութեամբ մի՛ Տիգրանայ ձեռուներէն կը քաշէ իւր ձեռքը , զոր սաստկապէս սեղմած էր Տիգրան :

Տիգրան իւր բնակարանը կը դառնար , խելքը միտքը Մաքրութիւն վրայ թողալով , և իւր բաղձանքը եղած էր զիտնալթէ արդեօք Մաքրութիւն սիրտը դեռ ազմտ էր : Բոլոր իւր փափաքները և երկիւղները իւր քորջը կըսէ , և կուզէ որ անիկայ ըլլայ իրեն թարգման Մաքրութիւն քով :


Բայց Տիգրանութիւն խոհեմ է , և իւր եղբօրը ուրիշներու հախած ըլլալը զիտէ , ուստի կըսէ աւոր . — Աղէկ զգուշացիւ . զՄաքրութիւն ի սրտէ կը սիրեմ և կուզեմ որ երջանիկ ըլլայ նա : Ապահով ես քու վրադ , չըլլայ որ սխալիս :

Տիգրան իւր զգացումներուն հաստատութիւնը փորձել կուզէ : Մեծ քաղաքը կը դառնայ , այն քաղաքը՝ որ իւր զործունէութեան տեսարանն եղած էր : Գործերու շարժման և փոթորկալի ընկերութեանց մէջ կը նետուի : Այն ժամանակ լաւ մի կիմանայ այս աղմկալի աշխարհին պարտաւ և ոչինչ լինելը : Կըզգայ նա որ այն ընկերութիւնը՝ որ զինքը քաղցրութեամբ կ'ընդունի , եթէ ձախորդ բազմի գերի ըլլայ ինքը՝ դուցէ իւր այնչափ խոստումներէն և ո՛չ մին իրեն օգնութեան յղէ :

Տիգրանութիւն քով կը դառնայ նորէն , և իւր նոր փորձառութիւնը կը պատմէ անոր : Այս անգամ կը հաւատայ անոր Տիգրանութիւն , և կերթայ իւր բարեկամութիւն կը գտնէ , և կըսէ անոր թէ շատ կը բաղձայ՝ եթէ զինքը իրեն քոյր աւուանէ :

Օրհնեալ ըլլայ Աստուած , շատ ժամանակ չանցնիր , Մաքրութիւն կը սիրէ զՏիգրան , և ձեռքը կը կարկառէ անոր զորովախառն և բարեպաշտ վստահութեամբ :

Մայիսի 1-ը 1877 թիւերէն Դեկտեմբերի 1-ը :



ՀԱՐՅԱՌԻՆԻ ԵՒ ՊԵՏԱՍԻՆԻՆԻ

Հ. — Ի՞նչ բան միշտ անհաստատ է :

Պ. — Զրեբու ընթացքը և կանացի բնութիւնը :

Հ. — Ո՞ր բանը կամ ամենին չընել և կամ ուշ պէտք է ընել.

Պ. — Բարեկամէ մի ստակ փոխ առնուիլ :

Հ. — Ո՞ր բանը միշտ պէտք է ընել.

Պ. — Առջե եղած բարիքէն և չարիքէն օգուտ քաղել :

Հ. — Ամեն բանէ աւելի հաճոյական բանը ո՞րն է .

Պ. — Ժամանակը :

Հ. — Քողի տակ ծածկուած բանը ո՞րն է .

Պ. — Ապագայն :

Հ. — Ի՞նչ բան հաւատարիմ է ,

Պ. — Երկիրը :

Հ. — Միշտ իւր խոստումը դրժող բանը ո՞րն է .

Պ. — Ծովը :

Հ. — Աշխարհիս մէջ ամենէն ցանկալի բանը ո՞րն է .

Պ. — Երջանիկ մահը :

Հ. — Ո՞ր ժամանակ պէտք է ուտել .

Պ. — Եթէ հարուստ ես՝ ուզած ատենդ կեր , իսկ եթէ աղքատ՝ երբոր կրնաս նէ :

Հ. — Ո՞ր նաւը ապահով կը սեպուի .

Պ. — Նաւահանդիստ ժամանողը :

Հ. — Ի՞նչ բան է այն՝ զոր ձեռք անցընելը քաղցր է .

Հ. — Այն բանը՝ որուն կը փափաքի մարդ :

Հ. — Ի՞նչպէս կրնայ մարդ արդարութեամբ և առաքինութեամբ ապրիլ .

Պ. — Ի՞նչ որ ինքը ուրիշներուն կը պատուիրէ , եթէ զայն անձամբ կատարէ :

Հ. — Ո՞ր վիճակը դժնդակ է մարդու .

Պ. — Ծեր և աղքատ ըլլալը :

Հ. — Աշխարհիս մէջ ամենացանկալի և լաւագոյն բանը ո՞րն է .

Պ. — Ազատութիւնը :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՔՐԷՅԵԱ ՊՈՐՃԵԱ

Անմահ Վ. իրթոր — Հիւօ փելիսոփայ — բանաստեղծին այս անուն թատրական երևելի վիպասանութիւնը՝ ընտիր աշխարհաբար Հայերէնի թարգմանելով՝ վայելուչ և մաքուր տպագրութեամբ հրատարակած է Յարգի Պարոն Տիգրան Յարութիւն Տէտէեան ուսումնական և ազգասէր երիտասարդը :

Որ և իցէ մէկը՝ եթէ ծախու առնելով զայն կարգայ , խիստ զոհ պիտի ըլլայ :

Կը ծախուի Տէտէեան տպարանը դինն է 1 Փըրանք :

Ը Ո Ւ Ն Ի Տ Ր Ե Կ Ե Ն

Օ. Դ. — Դ. Կ. , Մ. Կ. 20 , 1862 .

Մի քանի դրամոց դիններն ու արժողութիւնը :

	Փոխանակագրի ստակ .	Թարիֆայի ստակ
	դշ . փոյ .	դշ . փոյ .
Օսմանեան լիրա մէճ .	113 1/4	123
Արծաթ մէճիւլիէ . . .	22 36/40	24 1/4
Մահմուլիէ խոշոր . . .	98	104 1/2
Նոր քսաննոց ոսկի . .	23 28/40	25 1/4
Անկիւական լիրա . . .	126	134
Շէլին	6	6 1/2
Լ . Նաբուէոն ոսկի . . .	99 1/2	106
20 ֆրանքնոց	100	106 1/2
Բոլ Լ. մէքէոլա	49	20 1/4
Քարպուլանց խոշոր . .	18 32/40	20
Քարպուլանց	58 1/4	62
Մաճառ	57 1/4	61
Չիէքլի	25	26 1/2
Տիւրքլի	26	27 1/2
Մէտիոլան (Էլնիլ) . . .	20 1/2	22
Բրուսիան	47 32/40	49
Սլանց	4	4 1/4
Ֆիորին	3	3 1/4
Հինգնոց խոշոր 0/0 . .	4 1/4	44
՝ մանր 0/0	3 3/4	44 1/4

Փոխանակագրութեան (սամպլա) գիները .

Օսմանեան լիրան 115 1/4 հաշուելով :

Լ. տնտրա . 3 ամիս . 123 1/2 124 .

Մարտիլա . , , . 000 — 196 .

Թիւրքիստ . , , . 000 — 368 .

ՀԱՐԵԳԻՐ — ՏՆՕՐԻՆ

Գ. Պ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ

Օ. Մ. Բ. Ռ. Ն. Բ. Ե.

ՏՊԱՐԱՆԻ ՏԵՏԵԱՆ